ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

16 Օգոստոս 2019 թվականի թիվ 23 - Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-041-0172-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետերով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման 48 կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

06-041-0172-0002 ծածկագրով 0,16746 հա հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ գ.Լեռնապատ 10 փող.2փ.1տ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2019թ. Օգոստոսի
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ.Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան
հեռ. /0322/-68781

# ՈՐՈՇՈՒՄ

20 Օգոստոսի 2019 թվականի թիվ 24 -Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-041-0127-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ

Հիմք ընդունելով Ալիսա Արտաշեսի Մուրճանյանի ծնվ 14.10.1949թ և Աստղիկ Ռազմիկի Հակոբյանի ծնվ 01.01.1968թ դիմումները, Ա-Ձ « Արսեն Իսահակյան Ռուդիկի»-ի կողմից կազմված հատակագիծը և բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումով`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Վերականգնել Լեռնապատ համայնքի 06-041-0127-0008 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը
   ա) հողամասի մակերեսը 0.15927 հա
   բ) հողամասի սահմանները համաձայն հաստատված հատակագծի
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը 0.15927 հա անհատույց սեփականության իրավունքով հատկացնել և ճանաչել Ալիսա Արտաշեսի Մուրճանյանի և Աստղիկ Ռազմիկի Հակոբյանի սեփականության իրավունքը:
3. Լեռնապատ համայնքի 06-041-0127-0008 ծածկագրում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա չգտնվող,այլ անձանց իրավունքների ու օրենքով պահպանվող շահերը չխախտող,հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1970թ կառուցված 280քմ բնակելի տունը,ճանաչել Ալիսա Արտաշեսի Մուրճանյանի և Աստղիկ Ռազմիկի Հակոբյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
4. Տրամադրել փոստային հասցե 1փ 5փակ 6տ:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար` Ս. Աբազյան

2019թ Օգոստոսի 20
Գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՈՐՈՇՈՒՄ N 25-Ա**

<< 30 >> օգոստոսի 2019 թ

**ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԼՅՈՎԱ ՂՈՒՄԱՇՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ կետերով, քանի որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Լյովա Ղումաշյանի դիմումը:

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

1.Օրինականացնել Լեռնապատ համայնքի բնակիչ Լյովա Ղումաշյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի Լեռնապատ համայնքի 10 փ. 1 փկղ. 2 հասցեում գտնվող, 06-041-172-0004 ծածկագրով 0,1674 հա բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 72,8 քմ արտաքին չափերով բնակարանը:

2.Պարտավորեցնել Լյովա Ղումաշյանին 30-օրյա ժամկետում 72,8 քմ արտաքին չափերով բնակարանի օրինականացման համար համայնքին վճարել 63300 ՀՀ դրամ 1քմ-ի համար 869 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումից բխող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում:

4. Պետական գրանցման համար հիմք է հանդիսանում սեփականատիրոջ կողմից համայնքին 63300 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱԲԱՋՅԱՆ